

որ միակ հնարաւորն է ըստ զրից¹: Թէ այս
 «ստորոտը» նաեւ որ եւ է ծովահայեաց
 հովիտ կը պարունակէր, որոշ չէ, եւ
 նուազ հաւանական: Գոնէ Արշակունեաց
 Հայաստանը՝ Բարձր-Հայոց եւ Տայոց նա-
 հանգաց մասերով, Ծորոխի գծի վրայ՝ կը
 պարունակէր Պարխարի ստորոտները, մինչեւ
 բարձրագոյն լեռնաշղթային ջրաբաշխը: Այս
 բարձր գագաթներէն Արշակունեաց Հայաս-
 տանը ծովը կը տեսնէր, բայց իբր պետու-
 թիւն՝ քանի մը տասնեակ քիլոմետր հե-
 ռու ծովափը չէր իջած: Ի հարկէ ասի
 արգելք մը չէր՝ որ այն քայլը, զոր Պե-
 տու թիւնը չէր առած, առնուր հայ ցեղը:
 Արդէն հայ ցեղին նիստերու սահման-
 ները չեն համապատասխաներ հին Հայաս-
 տանի պատմական սահմաններուն, ինչպէս
 ուրիշ կողմեր ալ:

Բայց հայ ցեղը՝ նաեւ իբր ուրոյն փոքր
 պետութիւն մը հասաւ ծովը քիչ մ'աւելի
 արեւմուտքը: Բաց ի Արտաշէսի «Մեծ»

¹ H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, mit Beiträgen zur historischen Topographie Armeniens, Strassburg 1904. Հայ թրգմ. Հ. Բաւնարաս վ. Պիլէզիկճեան, Հին Հայոց տեղւոյ անունները, վիեննա 1907. Ազգ. Մտքին. ԾԳ.: